ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ

ՆԱԽԱԳԾԻ (*Խ-127-02.05.2019-ՏՏԳԲ-011/0*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

No.	*Առաջարկության հեղինակը*	*Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը*	*Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)*	*Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը*	*Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը*
1.	Հայաստանի Հանրապետության կառավարություն	Նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածներ	(…) կարգավորումները պետք է տեղ գտնեն համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգում, սակայն մրցույթի նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման դետալացված նկարագրությունը նպա-տակահարմար չէ կատարել օրենքում: Այդ առումով առաջարկում ենք նախագծով սահմանել, որ մրցույթի անցկացման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառա-վարման մարմինը: Այդ նպատակով առաջարկում ենք նախագծի 3-րդ հոդվածը հանել, իսկ 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 2. Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի առաջին նա-խադասությունը «ղեկավարներին» բառից հետո լրացնել «՝	Ընդունվել է, կատարվել է փոփոխություն	Ընդունվել է

			բացառությամբ համայնքային ոչ առևտրային կազմա-կերպությունների ղեկավարների, որոնք նշանակվում են մրցույթի արդյունքներով: Համայնքային ոչ առևտրային կազմակերպության ղեկավարի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգը հաստատում է սույն օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված մարմինը» բառերով:»		